ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/74

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Կոնսել» ՍՊԸ-ի 25.05.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Կոնսել» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Կոնսել» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 25.05.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահմպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ» ծածկագրով հայտարարված բաց մրցույթին Ընկերության կողմից մասնակցությունը խափանվել է էլեկտրոնային գնումների armeps համակարգի ծրագրային սխալի հետևանքով, ինչի մասին 20.04.2018թ. Ընկերությունը նամակ է հղել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ նախարար պարոն Վ. Արամյանի անունով: Տվյալ գրությունը ուղարկվել է նաև էլեկտրոնային տարբերակով secretariat@minfin.am հասցեով, պատճենը՝ minister@mtcit.am հասցեով:

Ի պատասխան Ընկերության գրության ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.05.2018թ. գրությամբ տրվել է ոչ հիմնավոր պատասխան: Ս.թ. մայիսի 11-ին Ընկերությունը արձագանքել է նշված գրությանը՝ առավել հիմնավոր մեկնաբանության և խնդրի հանգամանալից ուսումնասիրության պահանջով, ինչին ի պատասխան կրկին

ստացել ենք մեր բողոքը չբավարարող գրություն՝ թվագրված 16.05.2018թ.: Ի դեպ, գրությունը պետք է պարունակեր կից փաստաթուղթ, որը բացակայում էր ստացված ծրարում:

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը՝ խնդրում ենք կատարվածը որակել որպես գնման գործընթացի ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի խախտում և չեղյալ հայտարարել ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ ծածկագրով գնման ընթացակարգը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Անժելա Դավթյանը:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 01.06.2018թ. թիվ 08/15.3/9407-18 գրությամբ «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից 25.05.2018թ ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««Կոնսել» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնում եմ, որ ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ ծածկագրով բաց մրցույթը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից նվազագույն գին առաջարկած մասնակցին առաջարկվել է կնքել պայմանագիր: Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ«Կոնսել» ՍՊԸ-ի կողմից բողոքն անհիմն է և ենթակա է մերժման»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սամվել Թամրազյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/74 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Կոնսել» ՍՊԸ-ի 25.05.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական

տեխնոլոգիաների նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 01.06.2018թ. թիվ 08/15.3/9407-18 գրությամբ հայտնած դիրքորոշումը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Բողոքներ քննող անձին ուղղված 13.06.2018թ. թիվ 03/26-2/[1236631]-18 գրությունը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է բաց մրցույթ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Ընթացակարգի հայտարարությամբ նախատեսվել է, որ մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով մինչև նույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 41-րդ օրվա ժամը 17:00-ն:

«Կոնսէլ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին 25.05.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ վերը նշված մրցույթին իր մասնակցությունը խափանվել է էլեկտրոնային գնումների Armeps համակարգի ծրագրային սխալի հետևանքով, և կատարվածը որակելով որպես գնման գործընթացի ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի խախտում՝ խնդրել է չեղյալ հայտարարել «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ» ծածկագրով բաց մրցույթը:

Բողոքի քննության շրջանակներում Ընկերության կողմից Բողոքներ քննող անձին ներկայացվել են հայտի ներբեռնմանը հաջորդած հաղորդագրությունները, որոնք ստացվել են armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով: Մասնավորապես՝ «ծարագրային սխալ. խնդրում եմ կապնվել վեբ ադմինիստրատորին հաղորդելով սխալի համարը», և «the proxy server received an invalid response from an upstream server» (վստահված սերվերը ստացել է անվավեր պատասխան վերբեռնման սերվերից), հաղորդագրությունները: Ընկերության ներկայացուցիչը համոզմունք հայտնեց, որ Ընկերության կողմից հայտի բնականոն ներբեռնման ձախողումը էլեկտրոնային գնումների Armeps համակարգի ծրագրային սխալի արդյունք է:

Վերջինս նաև Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ֆինանսների նախարար Վ. Արամյանին ուղղված հարցումը և դրա պատասխանը: Մասնավորապես, ՀՀ ֆինանսների նախարարությունը նշված գրությամբ հայտնել էր Ընկերությանը, որ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ նշված ժամանակահատվածում էլեկտրոնային գնումների համակարգն աշխատել է անխափան:

Ընկերությունը արձագանքել էր նշված գրությանը՝ առավել հիմնավոր մեկնաբանության և խնդրի հանգամանալից ուսումնասիրության պահանջով, ինչին ի պատասխան 16.05.2018թ. կրկին ստացել է իր բողոքը չբավարարող նույնաբովանդակ գրություն:

Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց 01.06.2018թ. թիվ 08/15.3/9407-18 գրությամբ հայտնած դիրքորոշումը և Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ» ծածկագրով բաց մրցույթն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հավելելով, որ ընթացակարգին հաջողությամբ մասնակցության հայտեր են ներկայացրել թվով 2 կազմակերպություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինն իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

«Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով՝ Բողոքներ քննող անձը 11.06.2018թ. N ԳԲԽ-ԷՍ/1/[1235908]-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղեկալ Կ. Թամազյանին՝ խնդրելով վերջինիս հանձնարարականը ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանմանը՝ տրամադրելու «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ» ծածկագրով բաց մրցույթին Ընկերության հայտը չներբեռնվելու պատճառների մասին եզրակացություն՝ մասնավորապես, տեղեկացնելով այն մասին, թե ինչպիսի դեպքերում են մասնակիցները Armeps համակարգից ստանում հետևյալ հաղորդագրությունները. «ծարագրային սխալ. խնդրում եմ կապնվել վեբ ադմինիստրատորին հաղորդելով սխալի համարը», և «the proxy server received an invalid

response from an upstream server» (վստահված սերվերը ստացել է անվավեր պատասխան վերբեռնման սերվերից):

Ի պատասխան վերը նշված գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է հետևյալը.

«Ձեր կողմից նշված խնդիրն ուսումնասիրելու համար ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը (այսուհետ՝ Կազմակերպություն): Կազմակերպությունն ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ վերոգրյալ գրությանը կից լուսապատճենում առկա «The proxy server received an invalid response from an upstream server» հաղորդագրությունը պայմանավորված է ինտերնետային կապուղիների հասանելիության հետ, իսկ երկրոդ լուսապատճենի դեպքում հնարավոր չէ գնահատել առկա հաղորդագրությունը տվյալ հարցման արդյունք է թե ոչ, քանի որ հարցումը դեռ ավարտված չէ: Միաժամանակ Կազմակերպությունը համապատասխան լոգերի ուսումնասիրության արդյունքում ևս մեկ անգամ հաստատել է, որ ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելու փորձի ողջ ժամանակահատվածում էլեկտրոնային գնումների Armeps համակարգն աշխատել է անխափան»:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու արտաքին լուսավորության համակարգի պահմպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՏԿՆ-ԲՄԱՇՁԲ-2018/1ԱԼ» ծածկագրով հայտարարված բաց մրցույթի շրջանակներում էլեկտրոնային գնումների Armeps համակարգն աշխատել է անխափան:

Նկատի ունենալով, որ ըստ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության, «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից հայտ ներկայացնելու փորձի ողջ ժամանակահատվածում էլեկտրոնային գնումների Armeps համակարգն աշխատել է անխափան, ինչպես նաև այն, որ Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել թվով երկու այլ կազմակերպություններ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված փաստական հանգամանքները բավարար հիմք չեն տալիս հավաստելու, որ Ընկերության կողմից հայտի ներբեռնման ձախողումը էլեկտրոնային գնումների Armeps համակարգի ծրագրային սխալի արդյունք է:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

ՈՐՈՇԵՑ

«Կոնսել» ՍՊԸ-ի 25.05.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
Բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ